ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Լեվոն Խաչատրյանը, Եղիազար Հարությունյանը, Լարիսա Արտաշեսյանը, Սարգիս Ղազարյանը, Արտյոմ Ազիզյանը, Գոռ Սաֆարյանը, Նարեկ Հարությունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Մարոզ Սարիբեկյան, Պապին Վարդանյան, Մանուկ Հովհաննիսյան, Սեդրակ Սաֆարյան, Հասմիկ Մելքումյան, Նելլի Աբազյան, Միհրան Մելքումյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր համայնքի ղեկավարի օգնական՝ Մարոզ Սարիբեկյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համայնքի ավագանին որոշում է ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2025թվականի յոթերորդ նստաշրջանի սեպտեմբերի 9 -ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը.
1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2024թվականի դեկտեմբերի 25-ի N 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2.Հատիս բնակավայրի նախակրթարանի համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին
3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը օտարելու մասին
4.Հողամասերը համայնքի սեփականություն ճանաչելու մասին

5.Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
6.Համայնքի ավագանու հերթական նիստ հրավիրելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 58-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 79-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ)

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-
րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 79-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն «Հավելվածի»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 59-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՏԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը՝ Ակունք համայնքի ավագանին որոշում է.

1.Համաձայնություն տալ Ակունք համայնքի Հատիս բնակավայրի Վ.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի և <<Կրթական ծրագրերի կենտրոն >>գրասենյակի միջև իրականացվող միկրոծրագրի համաֆինանսավորման համար : Միկրոծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 9590100 /Իննը միլիոն հինգ հարյուր իննսուն հազար / դրամ գումար , որից համայնքի ներդրումը որպես դրամաշնորհ կազմում է 2747000 /երկու միլիոն յոթ հարյուր քառասունյոթ հազար/ դրամ :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 60-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ողային օրենսգրքի 66-րդ,67-րդ և 71 -րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ı մասի 21 կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-ֈ մայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան՝ համայնքի ավագանին

1. Թույլատրել համայնքի ղեկավարին օտարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը.
   1) աճուրդ վաճառքով և հաստատել մեկնարկային գներ համաձայն հավելված 1-ի
   2)ուղղակի վաճառքով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված 2-ի:
   3) հողամասերի սեփականության իրավունքի օտարումը փոխանակության միջոցով համաձայն հավելված 3-ի,
   4)ինքնակամ շինությունների օրինականացման նպատակով համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարել ինքնակամ շինությունը կառուցողին և սահմանել վաճառքի գին համաձայն հավելված 4-ի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 61-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման հավելված 2-ի 39-րդ կետի 1-ին ենթակետը,Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թվականի հունիսի 1-ի թիվ 186 -Ն հրամանը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հողամասերը ճանաչել Ակունք համայնքի սեփականություն համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 62-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 22-րդ կետերի,հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագիծը և միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները,համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 63-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարան մասին» օրենքի 62-րդ հոդվածի,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի ավագանու աշնանային՝յոթերորդ նստաշրջանի հերթական նիստը հրավիրել 2025 թվականի հոկտեմբերի 14-ին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 64-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԱՔՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐՋԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Մարոզ Սարիբեկյանը

_____